Արձանագրություն N 3
«Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-2024/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան «15» մայիսի 2024թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Կլիմենտ Չթչյանը
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝
Թամարա Հովսեփյանը
Լիլյա Խաչատրյանը
Հանձնաժողովի բացող անդամներ՝
Մարիաննա Արթելյանը
Արա Սողոմոնյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Փառանձեմ Խաչատրյանը

ՕՐԱԿԱՐԳ

1. «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-2024/25» ծածկագրով գնման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին:
2. Հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը սահմանելու մասին:

1. «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-2024/25» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին:

(Փ. Խաչատրյան)

1.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների **Armeps (www.armeps.am)** համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.

1.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են և համապատասխանում են «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-2024/25» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. Հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Փ. Խաչատրյան)

2.1 15.05.2024 թվականին հայտերի գնահատման նիստի ավարտի օրը, armeps (www.armeps.am) էլեկտրոնային համակարգի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-2024/25» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած՝

- «ԱՆԻՄԵԴ» ՍՊԸ-ին 1-4, 6 չափաբաժինների մասով ճանաչել ընտրված մասնակից,
- «Դելտա» ՍՊԸ 5 չափաբաժնի մասով ճանաչել ընտրված մասնակից,
- «ՌՈՄԱ» ՍՊԸ-ին 10 չափաբաժնի մասով ճանաչել ընտրված մասնակից,

2.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել՝ «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-2024/16» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

2.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

2.4 Պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակիցներին ծանուցել պայմանագրերի նախագծերը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել կից գրությամբ պայմանագրի նախագիծը երկու օրինակից, ինչպես նաև որակավորման ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիր և կից վճարման պահանջագիր), պայմանագրի կատարման ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիր և կից վճարման պահանջագիր):

2.5 ***7,8,9 չափաբաժինները հայտարարել չկայացած՝ համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, 3-րդ կետի՝ ոչ մի հայտ չներկայացվելու հիմքով:***

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Փ. Խաչատրյան)

3.1 «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-2024/25» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 12:00-ն, «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի շենքում, ք. Երևան, Աճառյան 2, 212 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Կ. Չթչյան

Անդամներ՝ _____ Թ. Հովսեփյան

_____ Լ. Խաչատրյան

_____ Մ. Արթելյան

_____ Ա. Սողոմոնյան

Քարտուղար՝ _____ Փ. Խաչատրյան